ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

15 հուլիսի, 2016 թ. ք. Երևան

«Կրթության ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը» հակակոռուպցիոն միջոցառման

2016 թվականի հուլիսի 15-ին Կապանում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում կազմակերպեց հակակոռուպցիոն միջոցառում՝ «Կրթության ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը» թեմայով: Միջոցառման նպատակը կրթության համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանումը և համապատասխան լուծումների նախանշումն էր:

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող Կարեն Զադոյանն իր ողջույնի խոսքում անդրադարձավ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի պայքարին՝ նշելով, որ ներկայումս մշակվում է հակակոռուպցիոն ունիվերսալ անկախ մարմնի մոդելը, որի կարևորագույն բաղադրիչներից է կրթական գործառույթը:

ՀՀ Կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչ Մարինե Աղաջանյանը խոսեց տարատեսակ ուսումնական հաստատություններում անցկացվող դասընթացների մասին՝ ուղղված կոռուպցիային և դրա կանխարգելմանը:

Ողջույնի խոսքերին հաջորդեցին զեկույցներ կոռուպցիայի կանխարգելման և քաղաքացիական կրթության ոլորտում հակակոռուպցիոն կրթության դերի և նշանակության մասին, այդ ոլորտում իրականացված բարեփոխումների, ինչպես նաև կրթական հաստատություններում հակակոռուպցիոն աուդիտի ինստիտուտի ներդրման կարևորության մասին:

Այսպես, Հայաստանի ԱՄՆ շրջանավարտների ասոցիացիայի գործադիր տնօրեն Ալեքսանդր Շագաֆյանը, խոսելով հանրակրթության ոլորտից, ասաց, որ հակակոռուպցիոն գործողություններ հարկավոր է իրականացնել երեք կարևորագույն ինստիտուտներում՝ դպրոցի կառավարման, մանկավարժական և աշակերտական խորհրդներում:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի տեղական փորձագետ Մարատ Ատովմյանն առաջարկեց կատարելագործել ընդունելության քննությունների համակարգը, փոփոխել ընթացիկ և ավարտական քննությունների համակարգը, ինչպես նաև բարձրացնել պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձերը: Նա առաջարկեց նաև բուհերում և դպրոցներում անկախ ուսանողական, դասախոսական և ծնողական խորհուրդներ ստեղծել, ուսանողների ու դասախոսների համար էթիկայի հարցերով դասընթացներ անցկացնել:

Ծրագրի բարեփոխումների հարցերով մասնագետ, իրավաբան Սյուզաննա Սողոմոնյանը բուհերում որպես կոռուպցիայի կանխարգելման կառուցակարգ նպատակահարմար համարեց ներդնել հակակոռուպցիոն աուդիտ՝ երկու ուղղություններով՝ պետական գնումների վերահսկողություն և հանրային ընկալման բարձրացում (արտաքին և ներքին):

Հարկ է նշել, որ Սյունիքի ուսուցիչները միջոցառմանը դժգոհում էին ցածր աշխատավարձերից՝ շեշտելով, որ դա կոռուպցիայի առաջացման հիմնական դրդապատճառն է: Նրանք նաև նշեցին, որ Սյունիքի երեխաները ճամբարների մասնակցելու համար ստիպված են հասնել Կոտայքի կամ Գեղարքունիքի մարզեր: Ուսուցիչներն առաջարկեցին, որ ուսումնական տարվա մեջ մտցված տարաբնույթ առարկաներ տեղափոխվեն ամառ, ինչպես նաև ամռանը կազմակերպվեն տարաբնույթ, այդ թվում և հակակոռուպցիոն ճամբարներ:

Խնդիրները լսելուց հետո Կարեն Զադոյանը նշեց, որ դրանք կքննարկվեն կոալիցիայի շրջանակներում և համապատասխան քայլեր կձեռնարկվեն: Հակակոռուպցիոն միջոցառման ընթացքում հնչած խնդիրները և դրանց լուծման առաջարկությունները կհավաքագրվեն և քննարկման համար կներկայացվեն համապատասխան պատկան մարմիններին, ինչը կնպաստի կրթության ոլորտում հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացմանը:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել ՔՀԿ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կիզորացվեն ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կկազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո, որից ԵՄ ներդրումը կազմել է 585.000 եվրո, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ներդրումը՝ 31.117 եվրո:

Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ԻՀԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված: Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայասատանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Ծրագրի հանրային կապերի համակարգող Նարինե Կարապետյանին, աշխատանքային օրերին, ժամը 9.00-18.00; հեռ. 540199; ֆաքս 580299; URL http://www.armla.am: Կատարող՝ Նարինե Կարապետյան, էլ. փոստ՝ info@armla.am:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն երևանյան գրասենյակ

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս՝ +37410 54 64 94
Հեռապատճեն՝ +37410 54 64 95

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

Ծրագիրը համաֆինանսավորվում է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից
Հեռախոս՝ +374 10 229610
Հեռապատճեն՝ +374 10 229615

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը գործում է 1999թ.-ից, որի առաքելությունն է աջակցել Հայաստանին զարգացնելու իր ժողովրդավարական հաստատությունները և ամրապնդելու քաղաքացիական հասարակությունը՝ գործելով օրենսդրական բարեփոխումների, կոռուպցիայի և թրաֆիքինգի դեմ պայքարի, բնապահպանական, մարդու իրավունքների իրազեկման բարձրացման, լրատվամիջոցների ազատության և այլ ոլորտներում:

Իրավաբանների հայկական ասոցիացիա
Հասցե Նալբանդյան 7, բն. 2
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99
Հեռապատճեն՝ +37410 58 02 99

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 56 03 60
Հեռապատճեն՝ +37410 56 03 60